

## 21 Սեպտեմբեր

Ամեն օր նոր ծանուցագիրներ կփոխանակուին Բ. Դրան եւ դեսպաններու միջեւ:

Բ. Դրան գրածները դեսպաններէն չեն ընդունուիր, ոչ ալ դեսպաններուն գրածները Բ. Դռնէն:

Դեսպանները գործերն աւելի փութով յառաջ տանելու համար լաւ կ'ընեն, եթէ Բ. Դրան մէջ հաստատեն իրենց բնակութիւններն եւ արտաքին գործոց պաշտօնէին հետ առատօրէն ծանուցագիրներ փոխանակեն:

Կարծենք մինչեւ այսօր Գարատաղի խնդրոյն համար հազար ծրագիր առաջարկուեցաւ եւ մերժուեցաւ. արդեօք Հայաստանի խնդրոյն համար քանի հազար ծրագիր պիտի խմբագրուի:

## 22 Սեպտեմբեր

Դուռը կխոստանայ Հայաստանի մէջ բարենորոգումները գործադրել, միայն թէ երեք ամիս պայմանաժամ կլինդրէ: Եթէ երեք ամսուան մէջ այդ բարենորոգումները չգործադրուին՝ Բ. Դուռն իրաւունք կու տայ տէրութիւններուն, որ դարձեալ... ազդարարութիւններ ընեն իրեն:

Ի՛նչ գեղեցիկ առաջարկութիւն:

Եթէ ազդարարութիւններն դարձեալ օգուտ չընեն՝ տէրութիւնները դարձեալ իրաւունք կ'ունենան ազդարարութիւն ընելու:

Ազդարարութիւն՝ ընեն որչափ որ ուզեն, իսկ ճնշում չենք ընդունիր:

## 23 Սեպտեմբեր

Բ. Դուռը ծրագիր մ'ալ առաջարկած է Հայաստանի բարենորոգումներու նկատմամբ:

Սոյն ծրագրոյն համեմատ՝ հասոյթին հարիւրին տասը տեղական պիտոյքներու համար պիտի գործածուի եւ հարիւրին ինսունը Պօլիս պիտի դրկուի:

Ա՛յս էր ապակենդրոնացման վրայ հիմնուած բարեկարգութիւնը...: Դեսպաններն մերժած են Բ. Դրան այս ծրագիրն ալ, եւ Բ. Դուռն երկրորդ մը խմբագրելու վրայ է: Ընդհանրապէս, կկարծուի, թէ մինչեւ 1881 ծրագիրներով պիտի զբաղի Բ. Դուռը: